

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լինով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 օպէկ.

ՆԵՐԿԱՅ 1890 ԹԻՒԱԿԱՆԻՆ

„ՄՇԱԿ“

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարի Մենք ստանում ենք սեփական շնորհակալութիւններ.
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսականը 6 ռուբլի.
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում, Թաւառային տունը).
Կայտարարութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևյալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԻՄԱՆՈՒԹԻՒՆ

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նախընտրել հայոց ուսումնարանը. Բացում հայ բարձրագույնը. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կին բժշկանք. Արտաքին լուրեր. — ԽԱՆՆ. ԼՈՒՆԵՐ. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՏԵՂԵԿԱՅՈՑ. — ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. «Ամուսնանք».

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԸՆԴԻ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ

Անցնալ օր մեզ պատահեց զնալ Նախընտրել մենք առիթից օգուտ քաղեցինք Նախընտրել հայոց ուսումնարանին այցելելու համար.
Ընթերցողը երևի երբեք իրան չէ երևակայում թէ քաղաքակրթված Թիֆլիսից շատ շատ մի 8 վերստ հեռավորութեան վրա կարող է Նախընտրել նման յետընկած, մոռացված մի գիւղ զբոսընկել Նախընտրել մի ջրաւոր գիւղ է, որի մէջ կան 50 տուն աղքատ հայեր այդպիսի կայ մի փոքրիկ եկեղեցի, որը ամենին նման չէ Թիֆլիսի փառաւոր եկեղեցիներին, կայ մի փոքրիկ ուսումնարան, որը իր յետընկած, անտէր դրութեամբ ամօթ է բերում Թիֆլիսի փողոցներ հայերին երևակայեցէ որ ամբողջ ուսումնարանը.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

„ԱՄՈՒՍԻՆՆԵՐ“

Կօմէդիա չորս գործողութեամբ, հեղինակութիւն ԳԱՐԻԷԼ ՍՈՒՆՈՒԿԻԱՆՏԻ

Անցաւ ամբողջ քսան տարի.
Հայ կինը մտաւորապէս և բարոյապէս աւելի զարգացաւ Այլ ևս չը կայ Անանին, նա հաշտվել է իր վիճակի հետ, տանելով չը սիրած, բայց օրինակաւ ամուսնու բռնութիւնը կամ լրբութիւնները.
Անանին չը կայ, բայց այժմ մեր առջև նրա տեղը կանգնած է Մարգարիտը կամ գուցէ նոյն Անանին դարձաւ Մարգարիտ.
Քսան տարին փոքր ժամանակամիջոց չէ. քսան տարվայ մէջ հայ կինը, ենթարկվելով հազար ու մի արտաքին ներգործութիւններին, ընտանեկան կաղժակերպութեան կերպարանափոխութեան, մարդկային ազատական ոգու առաջադիմութեան, քաղաքակրթական ազատարար շունչին, — նոյն Անանին դարձաւ կը համբերէր, կը տանէր ծնողների բռնաւորութիւնը, բայց այլ ևս չէր տանի ամուսնու լրբութիւնն ու բռնաւորութիւնը Մեր ծնողները.

որը պահում է հայոց Բարեգործական ընկերութեան հաշուով, ստանում է այդ ընկերութիւնից ընդամենը 25 ռուբլի ամսական օժանդակութիւն, և իր գոյութիւնը պահպանելու համար չունի որ և է որիչ արգելքներ...
Ուսումնարանում կան 16 երեխաներ, որոնք միայն վրացերէն գիտեն, իսկ հայերէն՝ շատ քիչ. Գլխավորում եղել է մի ուսուցիչ, որը ամսական 25 ռուբլու համար ամեն օր Թիֆլիսից մինչև Նախընտրել 8 վերստ ոտով գալիս է եղել, դատարար համար, և էլի քաղաք վերադառնալիս... Ուրեմն օրական ոտով անցնելիս է եղել 16 վերստ... Մի օր խեղճը միտք և այժմ հիւանդ պահած է Այժմ ուսումնարանը մի տերացուի ձևերին է մնացել.

Եւ քիչ միտք ունէր հիմնել այդ ուսումնարանը, առանց աշխատելու նրան մի կերպ ապահովեցին.

Թիֆլիսի հայերը, որոնք ներկայումս զմայլում են գեղարուեստական ցուցահանդեսով, լաւ կանէին փոքր ինչ մտածել և Նախընտրել պէս մի յետընկած թէ և հարևան գիւղի մասին, որը յետին աղքատութեան, ցրտի, կեղտի և տղիտութեան մէջ է խորհալիս...
Ինչ կը լինէր, եթէ մենք բացի մեզ վրա միայն մտածելուց, փոքր ինչ մտածէինք և մեր թշուառ հարեանները մասին էլ Անցեց խնդրեմ, հնար կայ մի ուսումնարան ամսական 25

ները մեր մարմինն ու մեր արեւն են. ծնողի ձեռքով նոյն լալ կրթված աղջկայ երեսին հասցած ապտակը դեռ կարող է տանել աղջկը, ինչքան էլ նա ինքնասէր լինէր և զգար իր գերազանցութիւնը իր ծնողներից, — նրանք զարձալ ծնողներ են, — բայց ամուսնու ձեռքով, որը ինչ և իցէ օտար մարդ է, օրին միայն կարող են կապել կընդ հետ զուտ բարեկամական, ընկերական յարաբերութիւնները, մարդու ձեռքով կնօջ երեսին զարմած ապտակը, — գուցէ կինը և չի տանի, մանաւանդ մի մարդու, օրի գերազանցութիւնը իր վրա նա անկարող է ընդունել, տանելով և նրա բռնաւորութիւնը, և նրա անազնութիւնը, և նրա կաշառակերութիւնը, և նրա ստախոսութիւնը, և նրա անաւանկութիւնը...

Ապացոյց որ դա այսպէս է, ապացոյց որ Մարգարիտը Անանիի շարունակութիւնն է, ապացոյց որ Մարգարիտի տիպը ուրիշ բան չէ, եթէ ոչ քսան տարուց յետոյ արթնացած Անանին, — այն է որ Մարգարիտն էլ պատկերաց առաջ սիրում էր Արտաշէսին, ինչպէս Անանին պատկերաց առաջ սիրում էր Միքայէլին: Մարգարիտն էլ, Անանիի պէս, չը նայելով որ սիրում էր Արտաշէսին, բայց խնայելից իր ծնողների կամքին, և պատկեր նրանց կամքով, և ոչ թէ իր ցանկութեամբ չը սիրած մարդու, Արտաշէսի հետ. Գրան տարի առաջ Անանին խոնարհվել է մարդու ներքին առջև և շարունակեց խոնարհվել և մարդու

լուրիով պահպանել... Դա կատարեալ ծաղր է, մեր կարծիքով.

Ե. Ղ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ողորմելի, ծիծաղելի և առանձին ցաւակցութեան արժանի դրութիւն է ներկայացնում այժմ Բացում հայ-բողոքական համայնքը: Երևակայեցէ, ձեռք մի համայնք, որից զվելով հեռացել են և անդադար հեռանում են բոլոր այն անհատները, որոնք խօսելու և մտածելու ընդունակութիւն ունեն: Իսկ ողորմելի մնացողը յետադիմութեան հակայական քայլեր է անում Երևանի մոլորակ քարոզութեան մէջ, զարգացական գործում, ընթերցարանական գործի մէջ, հասարակական սկզբունքների մէջ և այլն: Չը կարծէք, որ իմ խօսքերի մէջ որ և է չափազանցութիւն կայ:

Անա նստած են ժողովարանի դահլիճում ծերեր, երիտասարդներ, պատանիներ, օրիորդներ. Գարգիլը բարձրանում է ամբիօն և սկսում է աղաղակել. «Բոլոր ուսումնականները և գիտնականները խաբեւանք են... նրանց օրոտում ամենին մարդասիրութիւն չը կայ: Երկաթուղիները, շոգեաները և հեռագիւղները միայն մեզքը շատացնելու համար են: Առաջադիմութիւն, զբեք, Գլխավորում եղել է մի ուսուցիչ, որը ամսական 25 ռուբլու համար ամեն օր Թիֆլիսից մինչև Նախընտրել 8 վերստ ոտով գալիս է եղել, դատարար համար, և էլի քաղաք վերադառնալիս... Ուրեմն օրական ոտով անցնելիս է եղել 16 վերստ... Մի օր խեղճը միտք և այժմ հիւանդ պահած է Այժմ ուսումնարանը մի տերացուի ձևերին է մնացել.

Գրադարանի դրութիւնը կատարեալապէս ծիծաղելի է: Գրադարանը յանձնված է մի այդպէս անուանվող «արթնացած» (?) երիտասարդի աղաղակով, և տեսէք թէ ինչպէս է պարունը օգտվում իր աղաղակով իրաւունքից: Գրքերը բաժանել է երկու տեսակի՝ վիճակաւոր և օգտակար: Օգտակարներին վերաբերում են միայն հոգեւոր զբեքը, օրինակ «Սրբոց հանգիստ», «Իմաստի ճանապարհ» և այլն, իսկ վիճակաւորները զվարճանք են Նախընտրելի «Հիւսիսափայլներ».

առջև Քսան տարուց յետոյ Մարգարիտը նոյնպէս խոնարհվում է ծնողների կամքին, բայց այլ ևս չէ խոնարհվում մարդու կամքին...

Եւ նա բողոքում է...

Բայց ինչ բողոք. նա թողնում է մարդու տունը և գնում, առանձնանում է մի համեստ բնակարանի մէջ, իր ձեռքի աշխատանքով ապրելու և իր բոլոր յոյսերից մերկացրած, կոտրված, այլանդակած, ամայացած, քայքայված կեանքը մի կերպ քաջաչելու...

Աւելի օշինչ այդ է նրա ամբողջ բողոքը: Անուանեցէ նրա այդ բողոքը խուլ, անգործնական, կրաւորական բողոք, — բայց քսան տարվայ ընթացքում Մարգարիտի կերպարանը ստացած Անանիից՝ աւելի ներգործական բողոք չէր էլ կարելի սպասել.

Իսկ Միքայէլը որքան զարգացաւ, որքան ինքնաճանաչութեան հասաւ, որքան բնաւորութեան զօրութիւն ստացաւ քսան տարուց յետոյ՝ Արտաշէսի կերպարանին ընդունելով Միքայէլը իր կեանքի ամենամեծ դանձր կորցնելով, բաւականանում է միայն բացակայելով «Այլ», թշուառը, այն ինչ անվերջ, քաջ զինուոր և անվախ վիպաբանը մտքի համար մարտնչող Արտաշէսը քսան տարուց յետոյ այլ ևս չէ բաւականանում «այլ ու վախիթով», այլ վճռականութեամբ աւսում է հիւսիսում, դուռն դուռն կրկնում և թուլ-

Բաժնիկ բոլոր հեղինակութիւնները, Աղայանցի «Անանի» և այլն:

Դիմում է գրապահին մի արհեստաւոր և խընդրում է «Գամառ-Քաթիկայի» գրաւանները. — «Չէր տան սաղմոս կայ», հարցնում է գրապահը. — «Կայ մի քանի հատ», պատասխանում է արհեստաւորը. — «Գնա, ուրեմն ու կարդա, իսկ «Գամառ-Քաթիկայ» դարձալ զիբը է և ես չեմ կարող տալ:

Դիմում է գրապահին բնական զարգի հինգերորդ դաստան մի աշակերտ և խնդրում է կամ «Գաթիկ-Բէկը», կամ նրա նման մի զիբը. — «Չէր տան Աստուածաշունչ կայ», հարցնում է գրապահը. — «Կայ» — «Գնա, նրա մէջ կարդա Գաթիկ թագաւորի ճշմարիտ պատմութիւնը, փոխանակ Գաթիկ բէկի սուտ պատմութիւնը...» Եւ առանց զրբի ճանապարհ է դնում ուսանողին: Եւ չը կարծէք, թէ ես արհեստական անեկրօտներ եմ պատմում իմ պատմանքը ճշգրիտ զէպքեր են, որոնք անդադար տեղի են ունենում:

Անցնեց զարգացական գործին: Երկուսն զարգացնում է նոյն հոգաբարձութեան և նոյն տեսիլ հովանաւորութեան ներքոյ, որոնց մասին շատ անգամ է գրված և միշտ ապացուցված է, որ սրանք զարգացական գործի մասին բնական հասկացողութիւն չունեն: Միայն այս տարի մի ճառաւոր ժողով ժողով զարգացել մէջ, որովհետեւ հոգաբարձութիւնը սխալմամբ վարձեցին մի վարժուհի, որ աշխատասէր, զարգացած և հմուտ է իր պաշտօնին: Բայց նորերն ճամախուց գալիս է մի երկտասարդ, որ տեղս գործ որոնէ որ և է հաշտան մէջ, պարունը մի կիրակի քարոզում է, և հոգաբարձութիւնը հաւանում է: Ուստի կամենալով երիտասարդ-քարոզչին պաշտօն տալ (մեր մէջ գործն է մարդու համար և ոչ թէ մարդը գործի համար), օրոշում է արժանաւոր վարժուհուն արձակել և նրա պաշտօնը յանձնել յինչալ երկտասարդին: Երիտասարդը պատասխանում է, որ ինքը մանկավարժական ընդունակութիւն չունի: Բայց հոգաբարձութիւնը գտնում է, որ մեզ հարկաւոր չէ մանկավարժութիւն, այլ բաւական է, որ երեխաները կը սովորեն աղօթքներ և քարոզներ: Այժմ դեռ խօսքից գործի չեն անցել, որովհետեւ վարժուհու հետ մի տարով պայման է կապված: Իսկ եկող տարին մեր ողորմելի զարգաց կունենայ երկու քարոզիչ, բայց ոչ մի ուսուցիչ:

տուութեան թուղթը, մեր ազատութեան զէնքը ձեռք կը բերեմ:

Ինչպէս կրաւորական Անանին քսան տարվայ մէջ նշանաւոր քայլեր է արել, կերպարանափոխվելով «օրինական» բողոքից իր համար փրկութիւն սպասող Մարգարիտի տիպի մէջ, — այնպէս էլ կրաւորական, փառա Միքայէլը քսան տարվայ մէջ նշանաւոր քայլեր է արել, իր կեանքի փրկութեան յոյսը դնելով օրինական ճանապարհով ձեռք բերելի, բայց գուցէ և անհասանելի, ապարդիւն բողոքի վրա:

Արդար պէտք է լինել և պէտք է անկեղծ խոստովանել, որ Ստեղծութեանց լաւ դիտող, իրականութիւնից տպաւորվող, օրէկտիվ հեղինակ լինելով վարվում է միշտ և վարվել է և իր նոր պիէսայումն էլ կատարեալապէս հետևողաբար, յաջողաբար: Նա ներկայացնում է մեզ միմյան այնպիսի տիպեր, որոնք կարող են լինել մեր կեանքում և երբեք չի ներկայացնի այնպիսի տիպեր, որոնք չէր կարող ծնեցնել մեր կեանքը:

Բայց մեզ առարկում են. ընդունեցէ որ Ստեղծութեանց դիտած տիպերը կան մեր կեանքում, որ նա բանաստեղծ, հոգեբան լինելով, չընտրեալներին չարքին պատկանելով, աւելի նուրբ զգացմունքի, աւելի նուրբ ինտիմիտի, հոտաւորութեան տէր մարդ լինելով՝ դիտում, նկատում է այնպիսի երևոյթներ հասարակական կե-

Այս պէտքէ խոստովանելի, որ Ստեղծման իր միտքն արտայայտելու, ապահարգանի տին իր յարուցած գաղափարն անցկացնելու մար գործ է դնում իր պիէսայում մի շատ հազակտական մեթոդ: Հանդիտականներէ մէկ խելով թիւն յարուցանելու համար զէպի ա հարդանի գոյութեան անհրաժեշտութիւնը, ճեւելի զիմով է հետակա միշտից, նա իր աւա ինն երկից մինին ներկայացնում է որպէս կատարելալ հրէշ, մարդկային բոլոր պակա, թիւններով, բոլոր երեակայեի ե աներակա:

Երկրորդ պետությունները, որ Շվեյցարիայից յե-
տոյ թողլ տուեց կանանց այցելել համալսա-
րանները, Գերմանիան էր: Միևնուրեք համալսա-
րանի բժշկական ֆակուլտետը 1865 թվին ըն-
դունեց առաջին ուսանողուհուն: 1868 թվին
Միևնուրեք գտնվում էին 8, իսկ 1869 թվին
16 բժիշկ ուսանողուհիներ: Մի և նոյն ժամանակ
կանանց բարձրագույն կրթութեան հակառակորդ-
ները արժան էին և կանանց ընդունելությունը
արգելվեց: 1873 թվին Լայպցիգի համալսարանը
կրկին սկսեց կանանց ընդունել, բայց օրակա ա-
ղայն ունենալով: 1880 թվին կրկին արգելվեց
կանանց ընդունելությունը, որ մինչև այժմ եւս
չարժանակում է: Իսկ ներկայ օրակում կրկին
զորեղ ազդեցություն է նկատվում կանանց առջև
համալսարանների դռները բանալու օգտին: Սա-
կայն բժշկական գործունեությունը թող է տըր-
ված կանանց Գերմանիայում: Բերլինում գոյու-
թիւն ունի Տիբուրցիուս և Լեմուս կին-բժիշկների
հիմնած և Նրանց ձեռքով կառավարվող մի
կոնսուլինգիս: Այդ կոնսուլինգիսին, որ հիմնված
է 1876 թվին, տարուց տարի մեծ ժողովրդակա-
նություն է ստանում և 1887 թվին այնտեղ դը-
տնվում էին 1386 հիւանդներ: Ֆրանկֆուրտում
(Մայնի վրա) նոյնպէս գործում է մի կին-բժիշկ,
որը կարողացել է մեծ վստահություն գրաւել:
Բացի դրանից անյայտ չէ հռչակաւոր պրոֆեսոր
Տրաուբի աղջկայ—կին-բժիշկ Մեյնգարտին-Տրա-
ուբի գործունեությունը:

Ֆրանսիայում կանանց թող տրվեց Պարիզի
համալսարանի բժշկական ֆակուլտետը մտնել
1868 թվին 1888 թվին Պարիզում կային 114
բժիշկ-ուսանողուհիներ, առաւելագոյն ուսուցիչ:
Հիւանդներին խնամելը թող է արված կանանց
միայն 1885 թվին: Բորդոյում 1885 թվին սկսած
բժշկութեամբ են պարապում երեք կանայք: Մեծ
հռչակ ունի աշարայ տիկին Սիլբեր, որը աւարտել
է Պարիզի համալսարանը 1876 թվին և որը յետոյ
պալատական բժիշկ էր Կայրիւում:

Անգլիայում բժշկական գիտություններին իրան
նուիրող առաջին կինը տիկին Սփլա Xex-Blake
էր, որին արդարեայ կերպով կարելի է կա-
նանց բարձրագույն կրթութեան նահապաղ ա-
նուանել: Մերժում ստանալով Լոնդոնի համա-
լսարանից, նա գնաց Էդինբուրգ, ուր երկար
ջանքերից յետոյ նրան և էլ չորս կանանց, 1869
թվին հոկտեմբերին ընդունելու ընդունուց յե-
տոյ, աջողվեց համալսարան մտնել: Սակայն
կուրսը դեռ ևս չէր վերջացել: Համալսարանական
վարչությունը չէր կամենում թող տալ ուսանող-
ուհիներին բժշկական ընդունելու ընդունելու և
մեթոդի պարակարկա ունենալու իրաւունքը: Բայց
անգլուհիները դատ սկսեցին բժշկական ֆակուլ-
տետի դէմ և վերջի վերջոյ բաց արին սեփա-
կան բժշկական դպրոցներ և ձեռք բերին բժշ-
կութեան անելու իրաւունքը: Անգլիական առա-
ջին բժիշկ ուսանողուհիներին շանքերը բարեբար
աղջեցություն ունեցան ամբողջ կանանց բարձր
կրթութեան վրա Անգլիայում:

1874 թվին հոկտեմբերին Լոնդոնում հիմնվեց
կանանց բժշկական առաջին դպրոցը, ուր, բաց
վելուն պէս, մտան 23 ուսանողուհիներ: 1876
թվին թող տրվեց կանանց մտնել Գոթլինի հա-
մալսարանի բժշկական ֆակուլտետը, իսկ 1882
թվին կանայք տղամարդկանց հետ հաւասար
իրաւունքներ ստացան բժշկական գործունեու-
թեամբ պարապելու: 1889 թվին Լոնդոնում բժշ-
կական պարակարկով էին պարապում 70 կին-
բժիշկներ, որոնք աւարտել էին իրանց ուսումը
անգլիական համալսարաններում, և շատ ուրիշ
կանայք, որոնք աւարտել էին իրանց ուսումը
արտասահմանեան համալսարաններում: Եղին-
բուրգում հինգ կին-բժիշկներ կան, որոնց թեւում
և Yex-Blake, որը կանանց հիւանդութիւնների
բժիշկ է մի հիւանդանոցում, իսկ Գոթլինում
երկու կին-բժիշկ կայ:

Ռուսաստանում կանայք թողտուրթիւն ստա-
ցան բժշկական-վիրաբուժական ակադէմիա մտնել
1872 թվին նոյեմբերի 2-ին, իսկ կանդիդատները
90 էին (?): Առաջին տասնամեակի ընթացքում
(1872—1882) Ռուսաստանում բժշկականութիւնը
ուսումնասիրում էին 1.091 կանայք, որոնցից 700
գոյտօրի դիպում են ստացել (?), Այդ 700 կին-
բժիշկներից 54 զանազան կլինիկաների և լաբո-
րատորիաների գլխավորներն են (?): 62 կանայք գոր-
ծում են կանանց և մանուկների հիւանդանոց-
ներում, 130 համալսական բժիշկներ են, 5 հոգի
իրանց համար մասնագիտություն են ընտրել
վերաբուժութիւնը, իսկ 16 հոգի պիտիատրիայով
են պարապում:

Իտալիայում կանայք իրաւունք ստացան հա-
մալսարան մտնել 1876 թվին, այնպէս որ մի
կին-բժիշկ Մարգարիտա թագուհու պալատական
բժիշկ է, իսկ մի այլ կին-բժիշկ Պիդալի համա-
լսարանի պատաւօղիայի պրոֆեսորի ամբիոն ու-
նի:

Սպանիայում 1882 թվին սկսած երկու կին-
բժիշկներ են գործում:

Բուսինիայի Բուխարեստ քաղաքում նոյնպէս
երկու կին-բժիշկներ կան, որոնցից մէկը Եղի-
նաբէթ թագուհու պալատական բժիշկ է:

Շվեդիայի Ստոկհոլմ քաղաքում դեռ 1870 թվին
համալսարանի բժշկական ֆակուլտետը յաճա-
խում էին 5 կանայք:

Խրիստիանիայում չորս ուսանողուհիներ կան և
5 կին-բժիշկներ:

Բելգիայում բժշկութիւն են սովորում 10 ուսա-
նողուհիներ:

Ասիական երկրներում կին-բժիշկները մասա-
ւանը մեծ համբաւ ունեն Հնդկաստանում, ուր
բժշկական գործունեութեամբ պարապում և մօտ
100 հոգի, որոնցից երեք կանայք երեք առաջնա-
կարգ հիւանդանոցների գլխավորներն են:

Պարսկաստանում երեք ուսու կին-բժիշկներ
նորերս սկսեցին մեծ աջողութեամբ բժշկական
պրակտիկայով պարապել:

Ձինաց կայսրուհու պալատական բժիշկը կին
է:

Աֆրիկայի մասին յայտնի է միայն, որ Ալժի-
րիայի բժշկական ակադէմիայում գտնվում է
տիկին Ֆիւսի աւուսում մի ասիստենտուհի:

Աւստրալիայի գլխաւոր քաղաքներում նոյնպէս
կին-բժիշկներ կան:

Կանանց բարձրագույն կրթութիւնը ամենամեծ
առաջագիժութիւն անում է Ամերիկայում, ուր
մեծ ծառայութիւններ է մատուցել կանանց բար-
ձրագույն կրթութեան գործին հռչակաւոր կին-
բժիշկ Եղիստրէթ Blakwell, որը անխնջ կըս-
տում էր տղամարդկանց մրցութեան դէմ: Երկար
աշխատութիւնից և ջանքերից յետոյ նրան աջող-
վեց 1847 թվին աւարտել իր ուսումը համալսա-
րանում, և Ամերիկայում կնոջ ձեռք բերած
առաջին բժշկական դիպումը մեծ զարմանք պատ-
ճառեց և յեղափոխեց մտքերը յօգուտ կանանց
կրթութեան: Նոյն թվին Բոստոնում կանայք բժշկա-
կան կուրսեր բացվեցան, որոնք 1850 թվին Ֆիլա-
դէլֆիայում եւ բացվեցան, 1868 թվին Նիւ-Եոր-
կում, իսկ 1870 թվին Չիկագոյում: 1871 թվին
ամերիկական համալսարանները սկսեցին կանանց
ընդունել, և կանանց բարձրագույն ուսման գործը
վերջնականապէս յաղթանակ տարաւ: Այժմ Միա-
ցիպ-Նահանգներում բժշկութեամբ են պարապում
մօտ 3000 կին-բժիշկներ, որոնք ընդհանուր յար-
գանք են վայելում, և որոնցից շատերը տարեկան
20.000 դոլար և աւելի են աշխատում: Այդ
3000 կին բժիշկներից Նիւ-Եորկում բժշկական
գործունեութեամբ են պարապում 450, Բոստոն-
ում 580, Ֆիլադէլֆիայում 460, Մասաչուսէտում
375, և Բոստոնում 345 հոգի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

—Պարիզի մի քանի լրագրիներ այն միտքն են
յայտնում, որ Որէշանեան դուքսը Պարիզ գալով
նպատակ է ունեցել միայն հասարակութիւնը
խօսեցնել տալ իր վրա, և առհասարակ ուշադ-
րութեան արժանանալ:

—Սփիւրում տեղի ունեցած քաղաքական
դատադրութեան մասին արտասահմանեան լրա-
գրիները լի են զանազան տեղեկութիւններով:
սակայն այդ տեղեկութիւնները համարեաւ բոլորն
էլ միմեանց հակասում են: Նոյն իսկ շատ ան-
գամ պատահում է մի և նոյն լրագրում միմեանց
հակասող տեղեկութիւններ կարդալ Սփիւրի
դէպքերի մասին: Երևում է, որ այդ տեսակ լու-
րերը հաղորդվում են մեծ մասամբ գործին ան-
տեղեակ աղբիւրներից:

—Պարիզից գրում են, որ ֆրանսիական կա-
ռաւարութիւնը մտադիր է մեծացնել իր նաւա-
տորութիւնը:

—Լրագրիները սրտածակի տեղեկութիւններ
են հաղորդում այն դժբաղդութեան մասին, որ
պատահել է Վաշինգտոնում, ծովային մինիստր
Տրէյսի տանը, հրդեհի ժամանակ: Գիշերը այդ
տան մէջ հրդեհ պատահեց: Երբ ընտանիքի ան-
դամները արթնացան, արդէն տունը կրակի մէջ
էր: Տրէյսի մի աղջիկ, մի ջահիլ և զեղչեցիկ

աղջիկ, իրան ներքև նետեց պատուհանից, և մե-
ռաւ. միւս աղջիկը կրակին զոհ դնաց: Տրէյսի
կինը աշխատելով իր հիւանդ մարդուն կրակից
ազատելու, ինքը զոհվեց: Գէպը ծանր տպաւորու-
թիւն է թողել Վաշինգտոնում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Էյֆէլէան աշտարակի կառուցանող Էյֆէլ
այժմ ամենաժողովրդական մարդն է ամբողջ
Ֆրանսիայում: Նրա անունը տալիս են զանազան
փողոցներին և հրապարակներին: Նրա պատին
բանկետներ են կազմում և նրան ուղղում են
օղետրված ճաշեր և ուղերձներ: Գոնէ այդպիսի
մարդկանցով միշտ օղետրվել տաքարին Ֆրան-
սիացիին, փոխանակ «VIVE» դուշերու արկածախը-
գիւր Բուլանժէներին....

Բժիշկ Գարամբեր Ֆրանսիական մի լրագրի
մէջ խօսելով ինֆուէնցայի մասին, այն կար-
ծիքն է յայտնում, որ այդ հիւանդութիւնը շատ
վատագուր է, նա այնքան թուլացնում է օրգա-
նիզմը, որ սա այլ ևս անկարող է լինում դիմա-
դրել ամենաթեթեւ հիւանդութիւններին: անգամ
Բժիշկ կարծիքով, ինֆուէնցան ծածկված միա-
լու բնաւորութիւն ունի, կրկնվում է, կրկնել է
տալիս ուրիշ հիւանդութիւններ, և վարակել է
հիմնվելով այդ բոլորի վրա, յիշեալ բժիշկը այն
կարծիքն է յայտնում, որ ինֆուէնցան, որը
ինչպէս մեզ յայտնի է, հէնց այժմ Անգլիոյկաթի
զաւառներում շատ զոհեր է տանում, աւելի ծանր
հիւանդութիւն է, քան նոյն իսկ խօսեանք....

Միջազգային գրական կոնգրէսը միւս տարի
գումարվելու է Լոնդոնում կամ Էդինբուրգում,
և ոչ թէ Մոսկոյում, ինչպէս որոշված էր Պա-
րիզի 1889 թվի գրական կոնգրէսում:

Շուտով Պարիզի և Լոնդոնի մէջ տեղեփոխ
պէտք է անցկացնել:

Եթէ հաւատանք եւրոպական մի քանի լրագրի-
ներին տեղեկութիւններին, Սերբիայի նախկին
թագաւոր Միլան այժմ իրան նուիրել է թէ դ-
թ ախաղ զինն էլ զուցէ Միլան այժմ իրան աւելի
երջանիկ է դրում, քան այն ժամանակ, երբ իր
ձեռքերի մէջ ունէր մի ամբողջ երկիր:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

Պետերսբուրգ, 2 փետրվարի «Journal de St.
Petersbourg» հաղորդում է, որ եկող թատրոնա-
կան սեզոնից Կայսերական թատրոնների գերմա-
նական խումբը արձակվելու է—«Новое Время»
լրագիրը հաղորդում է, որ տնայնագործութիւնը
զարգացնելու միջոցների նախագիծը ներկայա-
ցրած է պետական խորհրդին. այդ միջոցներից
միմե է նոյնպէս մանր տնայնագործական-արդիւ-
նաբերական բանկեր հիմնել:

ՊԱՐԻԶ, 2 փետրվարի: Բոյալիստների ցոյցերը
ի նկատի ունենալով, նախագահ Կարնո ինքնա-
բերաբար անկարող է ներուժն չորհել Որէշանեան

յելի արատներով օժտված՝ մի հրէշաւոր, հակա-
կրկին անձնաւորութիւն,—իսկ միւսին, օրպէս
անմեղութեան հրեշտակ, բոլոր հնարաւոր առա-
քնութիւններով և տաղանդներով օժտված մի
էակ....

Աւելի լուր հոգեբանական ձիրք պէտք է ունե-
նալ՝ ներկայացնելու համար իրերի այնպիսի
զրոյթիւն, երբ երկու կողմն էլ, իրանց լաւ և
վատ ընդհանուր մարդկային յատկութիւններով
հանդերձ, ինչպէս սովորապէս ասում են՝ երկուսն
էլ շատ լաւ մարդիկ լինելով,—անպայման ան-
հրաժեշտութիւն է զգացվում երկուսի համար,
այլ ևս միասին չապրել, միմեանցից բաժան-
վել....

Արդեօք ինչ պէտք է լինէր միմեանցից բա-
ժանվելու անհրաժեշտութեան շարժառիթը,—ար-
դեօք նոր և անսպասելի սէրը, կեանքից զոհո՞հ լի-
նելը, երկու կողմերի զաղափարներին, շահերի ան-
համեմատելիւնը, կամ այն հանգամանքը, որ եր-
կու ամուսնիւնների մէջ, բացի սեռական կապերից,
ուրիշ որ և է բարոյական, հոգեկան, հասարա-
կական կապեր ու շահեր չը կան, կամ վերջա-
պէս այն յաճախ պատահող երեւոյթը, թէ աղջի-
կը շատ վաղ և առանց սիրելու ամուսնանալով
լաւ մարդու հետ, նրա կինը դառնալու ժամա-
նակ միամտաբար հաւատառած լինելով, որ ինքն
երբեք ընդունալի չի լինի ճշմարիտ սիրելի, միա-
մտաբար հաւատալով, որ իսկպալս սէր չը կայ
էլ աշխարհիս երեսին, այլ կայ միայն փոխադարձ

յարգանք և փոխադարձ պարտածանալութիւն,
վերջը, հասակ առնելով, նոր է հանդիպում մի
մարդուն, որին կարող է օրել և սիրում է,—ես
չեմ վստահանում վճռել թէ այդ հոգեբանական
թէմաներից որը պէտք է ընդունել Սունդուկեանց,
քանի որ այդ տեսակ թէմաների վրա բաւական
աշխատել են մեր հայ հեղինակները: Եւսելի ըն-
դունակ օտարազգի հանձնաբեղ հեղինակները, ո-
րոնցից ամենահանձնարեղն էր գերմանացի Գեօրգէ,
կամ նոյն իսկ ռուս Տուրգենևի և այլն և այլն....

Եւ միմայն պնդում եմ, որ Սունդուկեանց մի
շատ նահապետական մեթոդ է ընտրել իր դատը
պաշտպանելու համար. փոխանակ մի լուր և նուրը
հոգեբանական ընդունելու անելու, փոխանակ ի-
րերի այնպիսի զրոյթիւն ներկայացնելու, երբ
որ ամուսիններն էլ վատ մարդիկ չեն, բայց այ-
նու ամենայնիւ ստիպված են միմեանցից հե-
ռանալ,—նա մի կողմը հրէշ է ներկայացնում,
իսկ միւս կողմը՝ հրէշ տակ և այսպիսով նշա-
նաւոր կերպով հեշտացնում է իր գործը, հանդի-
սականների համակրութիւնը գրաւելու և ակա-
մայ ծնեցնելու նրանց սրտերում այն համոզմուն-
քը, թէ կան զէպքեր, երբ ապահարգանք
միակ փրկարար դարձան է դժոխք դարձած ա-
մուսնական կեանքից ազատվելու համար:

Բայց զուցէ այսպէս էլ հարկաւոր էր գրել
ինչպէս գրեց Սունդուկեանց, որովհետեւ զուցէ
չափից դուրս նուրը հոգեբանական ընդունելու,
որը, եւ հաւատաքած եմ, Սունդուկեանցի ոյժե-

րից վեր չէր լինի, այնքան մատչելի չէր լինի մեր
հասարակութեան ուղեղին և սրտին: Գուցէ հայը
տեսնելով թէ երկու ամուսիններն էլ օրինաւոր
մարդիկ լինելով, ինչ որ նուրը հոգեբանական, իր
զգացմունքներին անհասանելի, իր հասկացողու-
թեանը անմատչելի տարած այն ուժիւնն եւ-
րի պատճառով միայն չէն կարող միմեանց հետ
հաշտվել, իրար հետ ապրել, հայը կը բացականչէր.
«Օրհնածներ, էլ ի՞նչի էք բաժանվում, մի կերպ
եօլլա տարէք էլի...»:

Ուրեմն ապահարգանքի անհրաժեշտութեան դա-
ղափարը հային հասկանալով դարձնելու համար
զուցէ և հարկաւոր էր անպատճառ ցոյց տալ նրան
անմեղ, ամեն առաքնութիւններով օժտված մի
կին, որը տանվում է բարոյական մի հրէշի
ձեռքում....

Սակայն զուգընթացաբար այդ ամուսնական
դժբաղդ զոյգի հետ, որի մի կողմը՝ կինը, իր երկտա-
սարդութեան ժամանակ սիրելիս է եղել մի այլ
երիտասարդին, բայց իր կամքի դէմ մարդու է
տուած եղել մի չը սիրած անձնաւորութեան, ո-
րի հետ նա ոչ թէ միայն բարոյական և հոգե-
կան օշինչ առնչութեան կէտեր չունի, բայց ո-
րին նա հետզհետէ սկսում է ատել, որից նա հե-
ղեալ զգում է նրա ընկած, ապականված հոգու
պատճառով, մի կին, որին ուրիշ եղբ չէ մնում,
ի՞նչ ոչ վախչել այդ ամուսնական դժոխքից,
—զուգընթացաբար այդ դժբաղդ ամուսնական

զոյգի հետ, Սունդուկեանց ներկայացնում է մեզ
իր նոր պիէսայում և ամուսնական կեանքի մի
նոր արշալոյս....

Դա լսելի և Հեղինէի սէրն է, որը հիմնված է
ոչ թէ միայն լոկ բնական համակրութեան, սեռա-
կան հակումների վրա, այլ և անձնական թէ նիւ-
թական և թէ բարոյական համեմատելիւնեան վրա,
փոխադարձ աջնիւ շահերի վրա, գիտակցական ա-
մուսնական «ընկերակցութեան» վրա, մի սէր, որը
բացի ստրանից օղետրված է իր նմանների բարո-
րութեան, նրանց բաղդին, ազգի երջանկութեան,
նրա մոռացված խաւար զաւակների մոռաւոր և
բարոյական առաջադիմութեան իրական կերպով
ծառայելու վսեմ զաղափարով, մի սէր, որը բա-
ցի ամուսնական նեղ ընտանեկան փոխադարձ
զգացմունքի վրա հիմնվելուց, լուսաւորված է և
հասարակական փոխադարձ գործունեութեան
շնորհ և անջնջելի լուսով....

Եւ Մարգարիտը, որը արդէն ձեռք է վերցրել
իր սեփական բաղդից, զգալով իր տանջված սրտ-
ով որ ինքն զոհ է եղել ամուսնական հին կաղձա-
կերպութեան, օգնում է այդ զոյգը, որի սրտերը
ներդաշնակութեամբ են բաբախում փոխադարձ
սիրով և հասարակութեան օգտին ծառայելու
չնրմ տենչով, ընծայելով երիտասարդներին իր
ձեռքով նկարած մի նկար, որը ներկայացնում է
չնոր կեանքի արշալոյսը»

Типографія Канцелярії Главногонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. 833.